

Սարգիս Գ. Պետրոսյան (Գյումրի)
Պարմ. գիտ. դոկտոր

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԱՌՔԵՐԻ ԵՒ ԿԱՌԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ


Բանալի բառեր – Ցեղանուն, դիցանուն, նախա-
րարական տոհմ, գիվորական դաս, առասպելաբա-
նական պատկերացում, խեթական արձանագրու-
թյուն, հայասական դիցարան, ժողովրդական քրիս-
տոնություն, հնդեվրոպական ցեղեր, հավատալիք,
մարտակառք, ցեղապետ-արքա, Տրոյական պատե-
րազմ:

Վաղուց է պատմաբանների և հնագետների կողմից բացահայտվել այն իրողությունը, որ Առաջավոր Ասիան է եղել անվավոր փոխադրամիջոցների՝ սայլերի և մարտակառքերի հայրենիքը: Բայց միայն վերջին տասնամյակներում է ձշտվել, թե Առաջավոր Ասիայի որ մասում կարող էին գտնվել դրանց ստեղծման համար անհրաժեշտ պայմանները: Իսկ դրանք պահանջում էին ամրափայտ ծառերով անտառների, անհրաժեշտ մետաղահանքերի և զարգացած ձիաբուծության առկայություն:

Ըստ այսմ Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը եզրակացնում են. «Անվավոր սայլերի առաջացման այդպիսի օջախներ մերձավորարևելյան տարածաշրջանում կարող էին լինել Հյուսիսային Միջագետքի շրջանները (Տիգրիսի վերին հոսանքում կամ Տիգրիսից արևելք) կամ էլ Անդրկովկասից մինչև Հյուսիսային Միջագետք ձգվող շրջանը՝ Վանա և Ուրմիա լճերի միջև ընկած կենտրոնով»^{*}: Ինչպես տեսնում ենք, մի դեպքում նրանք նշում են Հայկական լեռնաշխարհի հարավը կամ նրան արևելքից հարող շրջանը, մյուս դեպքում՝ Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը: Կարծում ենք՝ ձշմարտությանն ավելի մոտ է այս վերջին եզրակացությունը, որը մասամբ ներառում է նաև առաջինը:

^{*}Հոդվածն ընդունվել է տպագրության 20.10.2014:

1 Гамкредидзе Т.В., Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тб., 1984, с. 733-734.

Ժայռապատկերներ Ուղտասարից²

Հնագիտական նյութը ցույց է տալիս, որ վաղագույն մետաղի դարաշրջանում Հայկական լեռնաշխարհում գործածության մեջ են եղել երկու տեսակի սայլեր՝ երկանիվ և քառանիվ³: Երկանիվ սայլերն էլ հետագա կատարելագործումով վերածվել էին մարտակառքերի: Նախնական սայլերի անիվները իրենց առանցքին ամրացված հոծ տախտակներ էին՝ այնպիսիք, ինչպիսիք ունեին Հայաստանում մինչև XX դարի սկզբները գործածության մեջ եղած նախնական տեսակի սայլերը⁴: Դրանց եզներ էին լծում: Երբ երկանիվ սայլերը վերածվեցին մարտակառքերի, դրանց արդեն ձիեր էին լծում⁵: Հետագայում անիվները պատրաստում էին բրոնզից, և թեթև լինելու համար դրանք դարձան շառավիղավոր: Բայց անգամ այդ դեպքում առաջավորասիական մարտակառքերի զույգ անիվը կշռում էր գրեթե 30 կգ⁶: Հայկական լեռնաշխարհի մարտակառքերի անիվների վրա ավելի քիչ բրոնզ էր ծախսվում, որովհետև Ախթալայի դամբարաններից մեկից պեղված պակասավոր բրոնզե գոտու մարտակառքի պատկերը վկայում է, որ տեղական մարտակառքն ունեցել է երկու ոչ այնքան մեծ անիվ՝ 4-ական բարակ շառավիղներով⁷:

Հնդեվրոպական նախալեզվի *ret(h)–«գլորվել, պտտվել» արմատն ընկած է *rot(h)–«անիվ» բառի հիմքում, որից ծագում են ազգակից մի շարք լեզուներում «կառք, մարտակառք» նշանակող բառերը: Դրանցից են հին հնդկ. ra'tha «սայլ, կառք, մարտակառք», լատին rota «անիվ, շրջանակ, դուրգ», ավետ. raθa «կառք, մարտակառք», հին իռլ. roth «անիվ», լիտ.

2 Տե՛ս Գ.Կարախանյան, Գ.Սաֆարյան, Սյունիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», Եր., 1970, նկ. 276 (ձախիւր) և 117 (աջիւր):

3 Տե՛ս Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, Եր., 1941, էջ 74–76, Եսայան Ս., Կառամարտիկ գործանասերը և հեծելագորը հին Հայաստանում, Եր., 1994, էջ 29:

4 Սամուելյան Խ., նշվ. աշխ., էջ 80:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 77:

6 Տե՛ս Գорелик М.В., Боевые колесницы Переднего Востока III–II тысячелетий до н. э., «Древняя Анатолия», М., 1985, с. 193.

7 Տե՛ս Սամուելյան Խ., նշվ. աշխ., էջ 77:

rātas «անիվ», rātai «կառք» և այլն: Նույն նախաձևն ընկած է ազգակից լեզուների հետևյալ բառերի հիմքում. հին հնդկ. rathī- «կառավար», rathe-
 ṣṭhā «կառամարտիկ», ավեստ. raθaēštā «մարտակառքին կանգնած» «զինվոր, մարտիկ»⁸: Հնդեվրոպական ցեղերին բնորոշ առասպելաբանական մտածողությամբ «անիվ»-ը զուգադրվում էր ինչպես իր առանցքի շուրջ տարվա ընթացքում պտույտ կատարող երկնքի՝ «տիեզերական անվի», այնպես էլ արևի հետ: Այդ փաստերն են արձանագրել, օրինակ, ազգակից լեզուների հետևյալ արմատակից բառերը. հին անգլ. rador «երկինք», հին իսլ. rodull «արև»⁹:

Երկնքի անձնավորում աստվածությունը սովորաբար ունենում էր ամպրոպային բնույթ, ուստի հաճախ պատկերացվում էր «տիեզերական անիվ»-կառքով: Հին լիտվացիների Պերկունասը ամպրոպային ռազմիկ էր և շրջում էր մի կառքով, որը հենց rātai էր կոչվում¹⁰: Նման հավատալիք և երկնքի ամպրոպային աստծուն առնչվող նման եզրույթ ունեցել են նաև մեր նախնիները: Ցավոք, հին ժամանակների համար այդպիսի վկայություններ չունենք, բայց, բարեբախտաբար, XIX-XX դդ. սահմանագլխին գրառված նյութերը խոսում են դրանց գոյության և հազարամյակների խորքից գալու մասին: Հնդեվրոպական նախալեզվի ուղղակի ժառանգորդ մեր լեզուն հազարամյակների խորքից մեզ է հասցրել նախալեզվի հիշյալ roth-նախաձևից սերած մի այնպիսի տարողունակ բառ, ինչպիսին է **որոտ**-ը: Ինչպես է սա ձեռք բերել «ամպի գոռոց» նշանակությունը, երբ սպասելի էր «կառք, մարտակառք» նշանակությունը: Դիմենք հայ ավանդազրույցներին: «Քրիստոնեության ժամանակ հայերի, ինչպես հաճախ և այլոց մեջ Եղիան է փոխարինել որոտի աստծուն: Նա նաև անձրև բերողն է: Երբ նա, ըստ մի գրույցի, ուժեղ ու արագ քշում է իր **քառաձի կառքը**... այնժամ **կառքի դողդոցից որոտում է և կառքի անիվներից...** կամ մտրակից, երբ նա հարվածում է ձիերին, **փայլատակում է**»¹¹: «Այդ գեղեցիկ երկնքի վրայով քառաձի կառքը նստած ձեմում է Եղիա մարգարեն, որի **կառքի անիվներից առաջանում է (ամպի) գոռոց** և մտրակի զարկից՝ կայծակ» (հմմտ. «Եղիա մարգարեն երկնքի վրա **քառաձի կառքով** անցնելիս, **անիվների դառնալուց որոտումն է** առաջանում, իսկ մտրակի զարկից՝ կայծակ») ¹²: Նույնպիսի հավատալիքներ ունեն նաև ռուսները, որոնք հին սլավոնական Պերուն ամպրոպային աստծուն փոխարինել են նույն Եղիա մարգարեով (Илья пророк)¹³: Ըստ դրանց՝ որոտը երկնային սալահատակին Եղիա մարգարեի կառքի անիվների թխկթխկոցն է, իսկ կայծակը՝ այն նետերը, որոնցով նա հարվածում է չարքերին¹⁴:

Հայերենն ունեցել է նաև *rotha-ի հիմք հ.-ե. *ret- արմատից ծագած ***արիտ/արիթ** «կառք, սայլ» նշանակող մի բառ (հմմտ. հին հնդկ. rātha, ավեստ. raθa-, լիտ. rātai նույնիմաստ բառերը), որից կազմվել է «բեռնասայլ»

8 Гамкрелидзе Т.В., Иванов В.В., նշվ. աշխ., էջ 718-719:

9 Նույն տեղում, էջ 719:

10 Տե՛ս **Иванов В.В., Топоров В.Н.**, Исследования в области славянских древностей, М., 1974, с. 82.

11 **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. VII, Եր., 1975, էջ 69-70:

12 **Լալայան Ե.**, Երկեր, հ. I, Եր., 1983, էջ 240, Նույնի՝ հ. II, Եր., 1988, էջ 431:

13 Տե՛ս **Иванов В.В., Топоров В.Н.**, Перун, “Мифы народов мира”, т. II, М., 1988, с. 306-307.

14 Տե՛ս “Круглый год. Русский земледельческий календарь”, М., 1991, с. 286.

նշանակող *di-arit/*ti-arit բառը: Վերջինս պահպանված է խեթական արձանագրություններում ^{GIS}tijarit կամ *dijarit տեսքով՝ որպես գաղափարագիր ^{GIS}MAR.GID.DA բառի համարժեք¹⁵: Խեթերեն այս բառի համար ենթադրվում է հավանական խոռոխական ծագում¹⁶, բայց ակնհայտ է, որ գործ ունենք հայերենի օրինաչափությունների համաձայն կազմված բարդ բառի հետ: Նրա առաջին բաղադրիչը հայերեն **տի** (<*di) «մեծ» բառն է (հմնտ. **տի-եզերք**, **տի-կին**, ***տի-այր**>տէր), որի հիմքում տեսնում են հ.-ե. *dei «շողալ, փայլել» արմատը (ունեցել է նաև «երկինք» և «աստված» նշանակությունները. հմնտ. լիտ. *didas* «մեծ», իլյուր. *dē* «աստված, Զևս», մակեդ. *Δiv* «Զևս» բառերը)¹⁷: Ի դեպ, խեթական արձանագրություններում ^{GIS}tijarit բառի համարժեք ^{GIS}MAR.GID.DA բառի տակ հասկացվել է նաև երկնային սայլը՝ Մեծ Արջ համաստեղությունը¹⁸:

Որ կառքի և մարտակառքի գյուտը համապատասխան եզրույթների հետ միասին հայախոս ցեղերի միջոցով է թափանցել Փոքր Ասիա, վկայում են հետևյալ իրողությունները: Ախթալայի բրոնզեդարյան դամբարաններից մեկից պեղված վերոհիշյալ գոտուն պատկերված կառքը նույնական է ինչպես Լճաշենից և Լոռի բերդից հայտնի մարտակառքերի, այնպես էլ խեթական մարտակառքերի հետ¹⁹:

Մեկ այլ առիթով Ի.Մ. Դյակոնովը գրում է. «Ձիակառքերի միջոցով մարտ վարելու արվեստը Փոքր Ասիա կարող էր թափանցել նաև՝ շրջանցելով խոռոխներին, օրինակ՝ «Մանդա ցեղի» կամ «Սալա ցեղի» նման ինչոր վարձկան զորքերի միջոցով»²⁰: Նշելով, որ խեթական թագավորությունում ինչպես այս երկու ցեղերի, այնպես էլ Խեմնուվայի մարտիկները ապահարկ էին և ծառայում էին վարձով, նա ավելացնում է, որ մանդա ցեղը չի տեղորոշվում, իսկ սալա և խեմնուա ցեղերը (կամ մարզերը) պետք է որոնել Հայկական լեռնաշխարհում՝ Եփրատի և Վանա լճի միջև, հնարավոր է նաև՝ ավելի արևելք²¹:

Ի. Մ. Դյակոնովից առաջ Գր. Ղափանցյանը և Ա. Խաչատրյանը ցույց էին տվել, որ հայ նախարարական Մանդակունի տոհմը ծագում է մանդա ցեղից²², իսկ այդ նախարարական տոհմի ժառանգական տիրույթը Արշամունիք գավառն էր, որը նույնպես գտնվում էր Եփրատի և Վանա լճի միջև²³: Ընդ որում, Գր. Ղափանցյանը շեշտում է, որ Մանդա և Սալա ցեղերը եթե միասին են հիշատակված խեթական կողեքսում, ապա նրանցից սերած հայկական Մանդակունի և Սաղկունի/Սլկունի նախարարական տոհմերն էլ միասին են հիշատակվում թե՛ Վաղարշակ թագավորի կողմից նախարարություններ հաստատելու ժամանակ (Խորենացի, Բ, ը),

15 Տե՛ս Գамкрелидзе Т.В., Иванов В.В., նշվ. աշխ., հ. II, էջ 725, 726.
 16 Տե՛ս նույն տեղում, էջ 725:
 17 Տե՛ս Զահուլյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 13, 20, 36, 62, Նույնի՝ Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 117, 246:
 18 Տե՛ս Գамкрелидзе Т.В., Иванов В.В., նշվ. աշխ., հ. II, էջ 725:
 19 Տե՛ս Սամունյան Խ., նշվ. աշխ., էջ 78, Եսայան Ս., նշվ. աշխ., էջ 33, Դևեջյան Ս., Լոռի-բերդի ուշ բրոնզեդարյան մարտակառքը, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, N 1, էջ 216:
 20 Дьяконов И.М., Предыстория армянского народа, Ер., 1968, с. 43.
 21 Տե՛ս նույն տեղում, էջ 53:
 22 Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), 1961, էջ 45-46, Խաչատրյան Ա., Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Եր., 1933, էջ 223-225:
 23 Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 40:

թէ Գահնամակում (գրադեցնելով համապատասխանաբար 47-րդ և 48-րդ գահերը), թէ Զորանամակում («Արևմտյան դռան» նախարարությունների շարքում՝ համապատասխանաբար 14-րդ և 15-րդ տեղերում)²⁴:

Որ մարտակառքի գյուտը Հայկական լեռնաշխարհից և ոչ թե Միջագետքից կարող էր թափանցել Փոքր Ասիա, վկայում է այն իրողությունը, որ հին բաբելոնյան Համնուրապի թագավորի (մ. թ. ա. 1792–1750 թթ.) ժամանակաշրջանից մեզ հասած միջագետքյան 4 շառավղով անիվների նկարները ոչ թե սայլին են պատկանում, այլ ներկայացված են առանձին՝ որպես պատերազմական և արևի աստվածության խորհրդանիշ²⁵: Ընդ որում առասպելաբանական այդ պատկերացումը Հայկական լեռնաշխարհում ևս շատ հին ակունքներ ուներ և գոյատևել է հազարամյակներ: XIX դարավերջի վանեցիների պատկերացմամբ «Արեգակն բուլորակ քանց սելի ակն (անիվ) կրակոտ» է²⁶: Պատերազմում մարտակառքի լայն կիրառման հետևանքով և արևի սկավառակի հետ անվի առասպելաբանական զուգորդման²⁷ հիման վրա էր, որ արդեն Արև-աստվածն էր պատկերացվում որպես կառավար և կառամարտիկ: «Պատերազմական այդ աստվածության անվանն էր նվիրագործված նաև ռազմակառքը»²⁸: Այս բանն է կարծես ապացուցում Ախթալայի գոտու մարտակառքի պատկերը: Այս կառքի թափքում նստած մարդու ձեռքի սկավառակաձև իրը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ այստեղ պատկերված է արևի աստվածը՝ ձեռքում պահած արևի սկավառակը²⁹:

Արևի աստվածների ռազմական գործառույթների ընդլայնումը պայմանավորված էր Առաջավոր Ասիայի մի շարք երկրներում տեղի ունեցած այն գործընթացներով, որոնք հանգեցրել էին իշխանության գրավմանը՝ զինվորական դասի մեջ որպես վերնախավ առանձնացած Արև-աստծու հովանավորյալ կառամարտիկներից: Դրա լավագույն վկայությունն է Միտանի թագավորությունում (մ. թ. ա. XVII–XIII դդ.) կառամարտիկ մարիանիների ունեցած արտոնյալ կարգավիճակը³⁰: Վ. Վ. Իվանովի և Ի. Մ. Դյակոնովի կարծիքով, Միտանիի արտոնյալ այս վերնախավի marianne անվան հետ ծագումնաբանական կապի մեջ է բիայնական սեպագրության մեջ հիշատակված mari- «ազնվագարն, ազնվական» բառը³¹, որի նախնական իմաստը ևս կարող էր լինել «կառամարտիկ»: Սարդուրի II-ի (մ. թ. ա. 764–735 թթ.) տարեգրությունից պարզվում է, որ Ուրարտուի այս արքան զինվորական դասը ներկայացրած sure-ներին տրամադրել էր 92

24 Տե՛ս **Адонц Н.**, Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, с. 249–250, 251–152, 263, **Յակոբեան Ա.**, «Գահնամակ ազատաց և տանուտէրանց Հայոց» և «Ջալրանամակ». Հետազոտություն և քննադրել, «Բազմավէպ», 2011, N 3–4, էջ 535, 543, **Ղափանցյան Գ.**, նշվ. աշխ., էջ 46:

25 Տե՛ս **Սամուելյան Խ.**, նշվ. աշխ., էջ 80:

26 Տե՛ս **Սրվանձտյանց Գ.**, Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 168:

27 Տե՛ս **Донини А.**, Люди, идолы, боги, М., 1962, с. 50–51.

28 **Սամուելյան Խ.**, նշվ. աշխ., էջ 80:

29 Տե՛ս **Եսայան Ս.**, նշվ. աշխ., էջ 59:

30 Տե՛ս **Янковская Н.Б.**, Ашшур, Митанни, Аррапхэ, “История древнего мира. Ранняя древность”, М., 1989, с. 189.

31 Տե՛ս **Иванов В.В.**, Урартск. Mari, хурритск. Marianne, хайасск. Marija-, “Переднеазиатский сборник”, III, М., 1979, с. 101–109; **Дьяконов И.М.**, Урартские письма и документы, М., 1963, с. 39, 81, 85, Նովիխ` Хурритский и урартский языки, “Языки Азии и Африки”, III, М., 1979, с. 60.

մարտակառք և 3600 նժույգ³²: Կարծում ենք՝ դրանք նախ և առաջ բաժին էին հասել զինվորական դասի վերնախավը կազմող և արքայական թիկնազորում ընդգրկված *marī*-ներին, որոնք իրենց անվանակից *marianne/mariannu* կառամարտիկների նման³³ թագավորից ստանում էին մարտակառք, ձիեր և զենք³⁴: Գ. Ջահուկյանը և Վ. Վ. Իվանովը հիշյալ եզրույթներին առնչում են Հայասայի արքայական *Marija* անունը³⁵, որը, Վ. Խաչատրյանի կարծիքով, ոչ թե անձնանուն է եղել, այլ տիտղոս³⁶:

Marija անվան՝ նախապես «կառամարտիկ» նշանակող զուգահեռների գոյությունը թույլ է տալիս նույնպիսի մի տեսանկյունով դիտելու նաև Հայասայի մեկ ուրիշ ցեղապետ-արքայի *Karani* անունը³⁷: Սա կազմված է լինելու **կառ** արմատից –ան վերջածանցով, կամ նույն արմատից –անի վերջածանցով (հմմտ. **լեզուանի, կենդանի, հոլանի, պիտանի** և այլն): **Կառ** արմատը «կառք» իմաստով պահպանված է հայերեն **կառավար** և **կառավարել** բառերում, որոնք իրենց ուղղակի «կառք վարող» և «կառք վարել» իմաստներից բացի ունեցել են այնպիսի փոխաբերական, բայց հետագայում հիմնական դարձած իմաստներ, ինչպիսիք են «ղեկավար, ուղղիչ», «ուղղել, առաջնորդել, վարել, ղեկավարել» և այլն³⁸: Վերանայման կարիք է զգում հայերեն **կառ** արմատին կելտական ծագում վերագրող տեսակետը, մանավանդ որ, ինչպես նշվեց, սայլ-կառքերի և մարտակառքերի հայրենիքը ոչ թե Եվրոպան է, այլ Առաջավոր Ասիան, մասնավորապես Հայկական լեռնաշխարհը: Անտարակույս, **կառ-ք** բառի հիմքում հ.–ե. *ger- (ստորին ձայնդարձը՝ *gr-) արմատն է՝ «դարձնել, ոլորել, գալարել» նշանակությամբ: Հնդեվրոպական նախալեզվի այս արմատից ցեղակից լեզուները զարգացրել են «շրջանակ, բոլորակ, օղակ», «կեռ, գունդ, մագիլ» և այլ իմաստներ³⁹: Հմմտ. հին հուն. γέρον «հյուսածո վահան», γρονός «կոր», հին հյուս. kringr «օղ, շրջանակ», kringla «շրջանակ, բոլորակ» և այլն⁴⁰: Է. Աղայանը հնդեվրոպական արմատի միջին *gor- ձայնդարձից բխեցնում է հայերեն **կոր** արմատը, իսկ ստորին ձայնդարձից՝ **կարթ** բառը⁴¹: Վերջինիցս է բխեցվելու ինչպես **կառ-ք**, այնպես էլ **կառափն** բառերի **կառ** արմատը: **Կառափն** «գլուխ, գանգ» բառը **կառ** և **ափն** բաղադրիչների բաժանել էր դեռևս Հ. Հյուբշմանը՝ սրանցից երկրորդը համեմատելով **կլ-ափն** բառի երկրորդ բաղադրիչի հետ⁴²: **Կառափն** բառի՝ այս նույն արմատից ծագած լինելու մասին է խոսում արմատի ժառանգների նաև «գունդ» նշանակությամբ գործածվելու փաստը:

32 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 1, Եր., 1981, էջ 80:

33 Джаукян Г.Б., Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ер., 1964, с. 36–37.

34 Տե՛ս Иванов В.В., նշվ. աշխ., էջ 107:

35 Տե՛ս Джаукян Г.Б., նշվ. աշխ., էջ 37, Иванов В.В., նշվ. աշխ., էջ 107:

36 Տե՛ս Хачатрян В.Н., Марийа-титул хайасских царей, “Древний Восток”, 5, Ер., 1988, с. 57–62.

37 Տե՛ս Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 130–131:

38 Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1, Եր., 1979, էջ 1057:

39 Տե՛ս Աղայան Է., Բառարանական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 102–103:

40 Տե՛ս նույն տեղում, էջ 105–106:

41 Տե՛ս նույն տեղում, էջ 105:

42 Տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. II, Եր., 1973, էջ 529–530 (H. Hübschmann, Armenische Grammatik, 1–2, Leipzig, 1895–1897, S. 458):

Հնդեվրոպական նախալեզվի *ger- արմատի *gr- ստորին ձայնդարձի «սայլ, կառք», «մարտակառք» նշանակությամբ գործածված լինելու տեսանկյունից առանձնակի ուշադրության է արժանի ժամանակին Աֆրիկայի հյուսիսում բնակված գարամանտների (Garamantes) ցեղանունը: Այն բաղկացած է *gara-mant- բաղադրիչներից, որոնցից երկրորդը նույնական է հնագույն հայկական manda (որից՝ **Մանդակունի**) ցեղանվան հետ: Նրա հիմքում հ.-ե. *mend- «ձի, նժույգ» բառն է, որից՝ *mendiānā «ձիավոր, հեծյալ»⁴³: Որ ցեղանվան առաջին *gar(a)- բաղադրիչը «կառք» է նշանակում, ցույց է տալիս Հերոդոտոսի հետևյալ վկայությունը. «Այս ցեղը հույժ մեծաթիվ է... Այս գարամանտներն իրենց **քառաձի կառքերով** որսում են քարայրաբնակ եթովպացիներին, քանի որ քարայրաբնակ եթովպացիներն ամենաարագոտն մարդիկ են բոլոր նրանցից, որոնց մասին մենք երբևիցե լսել ենք»⁴⁴:

Կառ (<հ.-ե. *gr-) արմատը «կառք, մարտակառք» նշանակությամբ կարելի է տեսնել նաև հայասական դիցարանում 13-րդ տեղն զբաղեցրած ^ԹKarhuhu աստծու անվան մեջ⁴⁵: Ի դեպ, Կարքեմիշի դիցարանում նույնանուն աստվածը գլխավոր աստվածություններից երրորդն էր⁴⁶: Ինչպես այս վերջինիս, այնպես էլ հայասական հիշյալ աստվածության անվան մեջ տեսնում են խեթա-լուվիական լեզուների **huh(h)a** «պապ» բառը⁴⁷: Բայց դա քիչ հավանական է: Մեր կարծիքով, այս դիցանունների երկու բաղադրիչներն էլ առկա են հայերենում: Դրանցից առաջինը կապ ունի հայերեն **կառ**, իսկ երկրորդը՝ ***խոխ**- արմատների հետ: Այս վերջինից կազմված բառերը իմաստաբանական երկու դաշտ են կազմում. Մի կողմից ունենք **խոխա(յ)** «երեխա, տղա» **խոխո**, «մանկիկ, փոքր երեխա»⁴⁸, իսկ մյուս կողմից՝ **խոխոզ**՝ «խրոխտ, ահավոր խրոխտ», **խոխել**՝ «անաստել, անհնազանդ գտնվել», **խոխոտել**՝ «հանդգնել, համարձակվել», **խոխալ**՝ «մեկի դեմ ռիս պահել», **խուխա(յ)**՝ «ամբոխ, խուժան, աղմուկ, հարձակում»⁴⁹: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ խեթական դիցարանն ուներ «Աստվածային ձիավոր» Turešgala աստվածությունը⁵⁰: Հայասական աստվածությունը ևս այդպիսին էր լինելու:

Պակաս ուշագրավ չէ հայասական դիցանվանացանկում **Կարխու-խու**//**Կառխոխոյին** հաջորդած աստվածության **Շիլիլի** (^ԹSilili) անունը⁵¹: Այս դիցանունը կարելի է տրոհել sil-il- բաղադրիչների, որոնցից -il-ը վերջածանց է (հմտո. **խառ-իլ, մաթ-իլ, տես-իլ** և այլն), իսկ արմատն է հնդեվրոպական նախալեզվից եկող ***սիլ**-ը: Այս նույն արմատն առկա է հայերեն հետևյալ բառերում. սլաք (<***սիլ-աք**, ոչ թե ***սուլ-աք**) «նետ, նիզակ տեգ», **սլիկ** (<***սիլ-իկ**) և **սլայ** (***սիլ-այ**): Վերջիններս նշանակում են

43 **Георгиев В.И.**, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, с. 117, 127:

44 Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը **Ս. Կրկյաշարյանի**, Եր., 1986, էջ 281-282, (Her. IV, 183):

45 Տե՛ս «Keilschriftkunden aus Boghazköi», Hf. 1-30, Berlin, 1923-1939, XXVI, 39, IV, 34; **Պետրոսյան Ս.**, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 131:

46 Տե՛ս **Meriggi P.**, Hieroglyphisch-hethitisches Glossar, Wiesbaden, 1962, S. 70.

47 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 327:

48 **Մալխասյանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, հ. II, Եր., 1944, էջ 279-280:

49 Նույն տեղում, հ. II, էջ 280, **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., հ. II, 386, 416:

50 Տե՛ս **Гамкрелидзе Т.В., Иванов В.В.**, նշվ. աշխ., հ. II, էջ 726:

51 Տե՛ս «Keilschriftkunden aus Boghazköi», XXVI, 39, IV, 34.

«շեղբիկ, լետ»⁵² և կազմված են **-իկ** և **-այ** վերջածանցներով (**սլ-այ** հմմտ. **արք-այ, մոր-այ, ափ-ափ-այ** և այլն)⁵³ : Սրանց ***սիլ** արմատը օրինաչափ կերպով ծագում է հ.-ե. *k'el- «ցողուն, կոթուն, նետ» արմատից: Հնդեվրոպական այդ նույն արմատից են սերում նաև ազգակից լեզուների այնպիսի բառեր, ինչպիսիք են հին. հնդկ. śalā «ձող», śalān «նետի ծայր, փուշ», հուն. κήλον «նետ, նիզակ», միջ. իռլ. cail «նիզակ», պրուս. kelian «նիզակ»⁵⁴: Այս նույն արմատն է, մեր կարծիքով, առկա հայկական Սլկունի (<***Սիլ-կ-ունի** կամ ***Սիլ-իկ-ունի**) նախարարական տոհմանվան, նրա հիմնադրի **Սլաք** անվան⁵⁵ խեթական Muršili, Hattušili և Pijašili արքայանունների մեջ⁵⁶:

Եթե այս բոլոր անուններում ևս *sil- բաղադրիչները «նետ, նիզակ» են նշանակում, ապա Karḫuḫu և Šilili աստվածությունները մարտակառքային զույգ էին կազմելու՝ ներկայացնելով ձիավար-կառավարին և կառավար-տիկին: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի ինչպես Լճաշենի, այնպես էլ Լոռի-բերդի հնավայրերից հայտնի չորս մարտակառքերի անձնակազմերի զույգի վերաբերյալ Ս. Դևեջյանի արած դիտողությունը: Դրանց «նույն կողմում կանգնած մարտիկները սաղավարտ չունեն: Թվում է, որ սա պատահականություն չէ. հավանաբար՝ ձախակողմյան մարտիկի գործը մարտակառք վարելն էր»⁵⁷: Մարտակառքային զույգի առասպելաբանական արտապատկերման տեսանկյունից ուշագրավ են հատկապես հայ ժողովրդական քրիստոնեության մեջ ամենահարգի երկու սրբերի՝ Ս. Կարապետի և Ս. Սարգսի կերպարները: Նրանց հեթանոսական նախատիպերից կարող էին մասամբ լինել նաև Կարխուխուն և Շիլիլին: Ըստ երևույթին, պատահական չէ հայասական դիցարանում նրանց զբաղեցրած տեղերը: Հայտնի է, որ հայասական դիցարանն արձանագրած խեթերեն տեքստի առաջին տողը ներկայացնում է արական-իգական (հավանաբար՝ հայր ու մայր) զույգ կազմած ^DU.GUR-ին և ^DINANNA-ին, իսկ հաջորդ տողը բաց է թողած՝ դրանց գլխավոր աստվածություններ լինելը շեշտելու համար: Դրանից հետո հիշատակված 12 աստվածությունները (մեկի անունը ջնջված է)⁵⁸ կարող էին լինել տարվա 12 ամիսների հովանավորները (հմմտ. հայ ավանդությունները Հայկի 12 ուստրերի և դուստրերի վերաբերյալ)⁵⁹: Այդ շարքի մեջ առաջինը ^DIzzistanu-ն է՝ «Բարի Արևը»⁶⁰, իսկ 11-րդ և 12-րդ տեղերը զբաղեցնում են ^DKarḫuḫu և ^DŠilili աստվածությունները: Նկատի առնենք, որ «Բարի Արևին» ձոնված տարեմուտ ամիսը սկսվելու էր մարտի 21-ին՝ Գարնանային գիշերահավասարի օրով

52 Մալխասյանց Ս., նշվ. աշխ., հ. IV, Եր., 1945, էջ 224:

53 Տե՛ս «Հայոց լեզվի պատմական քերականություն», հ. II, Եր., 1975, էջ 88-89:

54 Սուքիասյան Հ., Աճականը հայերենում, Եր., 1986, էջ 218:

55 Տե՛ս «Մովսիս Խորենացու Պատմություն Հայոց», Եր., 1981, Բ, ք, էջ 130:

56 Տե՛ս Պետրոսյան Ս., Ասուվա երկիրը և զույգ առաջնորդների սոցիալական ինստիտուտը, «Պատմա-բանասիրական հանդես», 2002, N 3, էջ 273 և ծան. 84:

57 Դևեջյան Ս., նշվ. աշխ., էջ 214:

58 Տե՛ս "Keilschriftkunden aus Boghazköi", XXVI, 39, IV, 26-34.

59 Տե՛ս Ալիշան Ղ., Հին հուսարք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ - Ս. Ղազար, 1985, էջ 143-144:

60 Տե՛ս Պետրոսյան Ս., Հին հայոց եռամսն ամսույ խորհուրդը, «Հանդէս ամսօրեայ», 1996, թիվ 1-12, էջ 422-423:

(ինչպես ժամանակին ընդունված է եղել հայոց հին տոմարում)⁶¹, այսինքն՝ Արեգ ամսի Արեգ օրով: Արեգ ամիսը «Միերի դռան» ուրարտական սեպագիր արձանագրություններից հայտնի «Արևի ամիսն» է⁶²: Ուրեմն, «Բարի արևի» ամսին (Արեգ ամսին, «Արևի ամսին») նախորդած և Կարխուխուն ու Սիլիլիին ձոնված ամիսները համընկնելու են այժմյան «հունվար-փետրվար» և «փետրվար-մարտ» ժամանակահատվածների հետ:

Հայոց եկեղեցին «հունվար-փետրվարին» նշում է Ս. Հովհաննես Կարապետի ծնունդը և Ս. Սարգսի տոնը, իսկ դրանց միջև՝ Բարեկենդան Առաջավորացը: Ըստ այսմ, թե՛ այս սրբերի և թե՛ առեղծվածային Առաջավորների կերպարների ձևավորման մեջ իրենց ներդրումն էին ունենալու հայասական Կարխուխու և Սիլիլի աստվածությունները: Պատահական չէ, որ **Կարապետ** բառին տրվել է նաև **կառապետ** ստուգաբանությունը⁶³: Ի դեպ, իմաստաբանական (ոչ ստուգաբանական) տեսանկյունից **կարապետ**-ը գրեթե նույնական է **առաջաւոր** բառի հետ, որովհետև նշանակում է «հորդիչ ճանապարհին»՝ իբրև **առաջնորդ**, և իբր **յառաջընթաց** սուրհանդակ, **նախընթաց**, աւետաւոր»⁶⁴: Քանի որ Izzistanu//«Բարի Արևին» ձոնված Արեգ//«Արևի ամսին» (մարտ-ապրիլ) նախորդում էին Կարխուխուն և Սիլիլիին ձոնված ամիսները (հունվար-փետրվար, փետրվար-մարտ), ուստի այս վերջին աստվածություններն էլ համարվելու էին «Բարի Արևի» առաջավոր աստվածությունները՝ Առաջավորները: Ըստ այսմ, հայոց մի ավանդազրույցում Արևին վերագրվում են երկու ուղեկիցներ՝ «երկու պահապան հրեշտակ, որոնք նրան ցերեկը՝ երկրի երեսով, իսկ գիշերը տակով ման են ածում»⁶⁵:

Հայտնի է, որ ժողովրդական քրիստոնեության մեջ հեթանոսական արևաբնույթ աստվածների փոխարեն արեգակնային լույսը (և լույսն ընդհանրապես) անձնավորողի դերում հանդես է գալիս Հիսուս Քրիստոսը: Նա ևս ունի իր առաջընթաց զույգը՝ Առաջավորների քրիստոնեական ժառանգորդները: Դրանց կարելի է հանդիպել, օրինակ, Հովհան Մամիկոնյանի գրառած և Վահան Մամիկոնյանին վերագրված հետևյալ տեսիլքում. «Եւ հայեցեալ Վահանայ ի գունդս կրանաւորացն, ետես յաջ թևս նոցա երիտասարդ մի ահագին տեսեամբ, և թագ ծիրանի ի գլուխ նորա և **խաչ**, և ի հանդերձից նորա՝ իբրև զհուր փայլէր: Եւ այլ **երկուս** երիտասարդական հասակաւ տեսանէր, որ **առաջի կային թևաւորք**, զոր և թշնամեաց տեսեալ յիմարեցան, և ի գետ անդր լցան...»⁶⁶: Դրանով ոգևորված՝ Վահանը խրախույս է կարդում իր զինակիցներին, պարզաբանելով. «Ահա տէրն արարածոց Քրիստոս երևի ի մեջ ծառայից իւրոց»⁶⁷: Վահանը չի բացահայտում այն երկուսի ով լինելը, որոնք Քրիստոս-Արևի

61 Տե՛ս Ալիշան Դ., նշվ. աշխ., էջ 143:

62 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 1, էջ 47, ծան. 1:

63 Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1, էջ 1064:

64 Նույն տեղում:

65 Ղանալանյան Ա., Ավանդապատում, Եր., 1969, էջ 5:

66 **Յովհան Մամիկոնեան**, Պատմություն Տարօնոյ, Եր., 1941, էջ 272. հմմտ. **Յովհան Մամիկոնեան**, Պատմություն Տարաւոնոյ, Գիտա-քննական քնագիրը՝ Ա. **Յակոբեանի**, - «Մատենագիրք Հայոց», հտ. Դ-Ե, է դար, Այթիլիաս, 2005, էջ 1113, տողատակ:

67 Նույն տեղում:

«առաջի կային», որովհետև բոլորին ծանոթ էին դրանք: Դրանք Առաջավորներն էին:

Վերևում շարադրվածի հիման վրա կարելի է ենթադրել, որ Տրոյական պատերազմին հայերի մասնակցության մասին ավանդությունը նույնպես ունի պատմական հենք և վերաբերում է խեթական բանակում ծառայած այնպիսի վարձկանների, ինչպիսիք եղել են մանդա, սալա և խենուա հայկական ցեղերի կառավարողները: Այս դեպքում իրենց բացատրություններն են ստանում Հայոց Ջարմայր նահապետին առնչվող այնպիսի տրամաբանությունից դուրս հասկացություններ, ինչպիսիք են «Ատրեստանն» ու «իր» Տևտամնու թագավորը և մեր Ջարմայրի «եթովպացի» գորքը: Մեր կարծիքով՝ արևմտյան Փոքր Ասիայի Ասուվա (Assusa) երկիրն է, որ անծանոթ լինելով Մովսես Խորենացու օգտագործած հունական աղբյուրին, վերածվել է **Ատրեստանի** (հուն. Ἀσσυρία//Assuria): Ասուվան խեթական թագավորությանը հպատակվել էր Թուդիսալիա IV (մ. թ. ա. 1265–1235 թթ.) թագավորի օրոք⁶⁸: Այն ներկայացնում էր 22 մանր երկրների միություն⁶⁹: Խեթական այս թագավորի տարեգրության մեջ դրանց թվարկման վերջնամասում հիշատակված Taru(u)isa և Uilušija երկրանունները համարվում են «Իլիականում» հայտնի **Տրոյա** և **Իլիոս/Իլիոս** քաղաքանունների խեթական ձևերը⁷⁰: Խեթական աղբյուրներից պարզվում է, որ Ասուվայում գերիշխելու գործում խեթերի հակառակորդը եղել է Ախիյավան (Աքայացիները, Միկենյան հույները)⁷¹: Ախիյավայի հույներն են եղել Տրոյան կործանողները⁷², իսկ նրանց հակառակորդ խեթերը, բնականաբար, օգնելու էին տրոյացիներին և օգնողների մեջ էր լինելու Ջարմայր նահապետը իր «եթովպացի» գորքով:

Այժմ դիմենք Մովսես Խորենացուն, որը երիցս հիշատակում է Ջարմայրին և իր «եթովպացի» գորքը: 1. «Ջարմայր. Սա օգնական Պոհամու ի Տևտամայ առաքեալ ընդ եթովպացի գաւրուն՝ մեռանի ի քաջացն Հելլենացւոց»⁷³, 2. «Թէ Եղիական պատերազմն առ Տևտամաւ. Եւ մեր Ջարմայր ընդ եթովպացի գաւրուն լինել սակաւուք, և ի նոյն մահ»⁷⁴, 3. «Եւ մեր Ջարմայր ի ծառայութեան Ատրեստանեայց սակաւուք ընդ Եթովպացի գաւրուն աւգնական Պոհամու, և անդ ի քաջացն Հելլենացւոց վիրաւորեալ մեռանի»⁷⁵: Ինչպես տեսնում ենք, Հայոց նահապետ Ջարմայրը Մովսես Խորենացու սկզբնաղբյուրում համարվել է Ատրեստանի Տևտամնու թագավորի հպատակը: Բայց **Տևտամնու** *Տևտ-ամ-նու անունը բացահայտ հնդեվրոպական բնույթ ունի: Նրա հիմք *տևտ բաղադրիչը համաձայնում է լինելու խեթ. tuzzi «գորք», «զենք կրող մարդկանց ամբողջություն», հին բարձր գերմ. diot «ժողովուրդ», օսկ. touto «համայնք», ումբր. totam «հասարակություն», լիտ. tautā «ժողովուրդ», գոթ. þiudans «արքա»

68 Տեն **Герни О.Р., Хетты, М.**, 1987, стр. 37–52–53.
 69 Տեն **Քոսյան Ա.**, Խեթական տեքստերը և Ախիյավան (Տրոյական պատերազմը), Եր., 1997, էջ 27:
 70 Տեն **Герни О.Р.**, նշվ. աշխ., էջ 52–53, **Ա.Քոսյան**, նշվ. աշխ., էջ 26–27:
 71 Տեն **Герни О.Р.**, նշվ. աշխ., էջ 51–52, **Ա.Քոսյան**, նշվ. աշխ., էջ 23–27:
 72 Տեն **Քոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 30–32:
 73 **Խորենացի**, Ա, ի:
 74 Նույն տեղում, Ա, լբ:
 75 Նույն տեղում:

բառերի և Toutonos գալլական անձնանվան հետ⁷⁶: Նրա հաջորդ թագավորի՝ Խորենացու բերած **Տևախոս** անունը⁷⁷ ևս պարունակում է նույն ***տևա** հիմքը, որին հավելվել է հունարենին բնորոշ **-ու** վերջավորությունը, ինչպես է նաև **Տևաամոս**-ի դեպքում: Այսպիսի անուններով ասորեստանցի թագավորներ գոյություն չեն ունեցել: Թերևս հնարավոր է մտածել, որ դրանք եղել են ոչ թե Ասորեստանի թագավորներ, այլ Ասուվայի ցեղապետ-արքաներ: Ըստ այսմ, պատահական չէ, որ Տրոյայի թագավոր Պրիամոսի դաշնակիցների թվում հիշատակվում են հարևան փոքրասիական Լարիսա քաղաքից եկած Տևտամիսի (Τευταμης, Τευταμιδας) թոռները⁷⁸:

Ինչպես տեսանք, թե՛ Զարմայրին, թե՛ Տևաամոսին մեր Պատմահայրը համարում է Տրոյական պատերազմի ժամանակակից: Բայց նրա կողմից բերված հայոց նահապետների, Ասորեստանի և Հրեաստանի թագավորների համեմատական ցանկում սրանք բերված են որպես հրեական Դավիթ թագավորի (իրականում՝ ապրած մ. թ. ա. X դարի առաջին կեսին) ժամանակակիցներ: Սա բացահայտ հակասություն է, իսկ նման հակասությունը կարող էր առաջանալ այն պատճառով, որ Խորենացու հունարեն աղբյուրում Ասուվայի փոխարեն հանդես է եկել Ասորեստանը, և ասուվացի Տևտամոսը դարձել էր Ասորեստանի թագավոր:

Ուրարտագետ Հ. Կարագոյյանը, հիմք ընունելով Ա. Շահնազարյանի բանավոր հաղորդումը, Զարմայրի առնչությամբ հիշատակված «եթովպացի»-ն էթիունցի է հասկանում⁷⁹: Սակայն այդ դեպքում անհասկանալի է մնում, թե նրա առաջարկած **Եթիու** (Եթիո) բառահիմքում (որից՝ Etiu-ni) ինչպե՞ս կարող էր հայտնվել «ավելորդ» **պ** հնչյունը, որի պատճառով էլ այն ընկալվել էր որպես «եթովպացի»: Մեր կարծիքով՝ նախնական *Etiop-ը բաղկացած է Et- և -iop բաղադրիչներից, որոնցից երկրորդը նույնական է **յոպնակ** (<յոպն-ակ) բառի **յոպն** հիմքի հետ: Քանի որ **յոպնակ** բառը «սայլակ» է նշանակում⁸⁰, ապա ***յոպն** բառն էլ «սայլ» էր նշանակելու: Այս դեպքում, ենթադրելի *Etiop բառի առաջին՝ et-, բաղադրիչը կարող էր «ծի» նշանակել, որով ամբողջ բառը ստանում է «ծիասայլ» նախնական նշանակությունը: Իսկ որ հնագույն հայերենում ***եթ**- «ծի» նշանակությամբ բառ գոյություն ունեցել է, մեր կարծիքով՝ վկայում է հ.ե. *pet- «վրա ընկնել, թռչել» արմատը, որից էլ ծագում են լատին. petō «շտապում եմ», «ուղևորվում եմ», իւեթ. piddai- «վազել, շտապել», «փախչել, թռչել» (վերջին նշանակությամբ արմատակից շատ բառեր կան ազգակից լեզուներում)⁸¹:

Մեր կարծիքով՝ հնդեվրոպական այդ արմատի տարբերակներն են ընկած հայերեն **եղակ** և **եղիսար** քիչ գործածական բառերի հիմքում:

76 Տե՛ս Գամքրելիձե Թ.Վ., Իվանով Բ.Վ., նշվ. աշխ., հ. II, էջ 749:

77 Տե՛ս Խորենացի, Ա, Ժթ:

78 Տե՛ս Թոմսոն Ժ.Ջ., Исследования по истории древнегреческого общества. Доисторический Эгейский мир, М., 1958, стр. 259.

79 Տե՛ս Կարագեղոզեան Յ., Մեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), Եր., 1998, էջ 215-216:

80 Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. III, Եր., 1977, էջ 406:

81 Տե՛ս Գամքրելիձե Թ.Վ., Իվանով Բ.Վ., նշվ. աշխ., հ. I, էջ 146 ծան. 1, հ. II, էջ 537, Գ.Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 13, 139:

Եղակ նշանակում է «ծի, որի վրա չեն հեծնում, այլ իրենց հետևից քաշում են պախուրցով. ընդհանրապես ձի, որ հոժարությամբ գնում է ուրիշ ձիու հետևից»: Բառը համարվում է փոխառյալ օսմանյան թուրքերենից⁸², երբ հստակ հայկական կազմություն ունի՝ բաղկացած ***եղ** արմատից և **-ակ** վերջածանցից (վերջինիս համար հմմտ. **բռնակ, գնդակ, եզնակ, տնակ** և այլն): **Եղիսար** բառը նշանակում է «իշառվույտ»⁸³: **Եղի-** և **-սար** բաղադրիչներով կազմված այս բառի առաջին բաղադրիչը նշանակում է «իշու, ձիու» (սեռ. հոլով), իսկ երկրորդ բաղադրիչը՝ ***սար**-ը, նշանակել է բույսի ինչ-որ տեսակ: Վերջինս ծագում է հ.-ե. ***k'er**- «աճել, սնվել, սնուցել» արմատի ստորին՝ ***k'r**- ձայնդարձից: Հնդեվրոպական նույն արմատի տարբերակներն են տեսնում ազգակից լեզուների հետևյալ բառերի հիմքում. հայ. **սերմն, սեր**, լատին. creber «լսիտ աճած, թավ», Cerez «հողագործության հովանավոր դիցուհին», հուն. κόρος «ընձյուղ, մատղաշ ձյուղ», լիտ. šerti «սնուցել» և այլն⁸⁴: **Եղիսար** (<եղի-սար) բառի «իշառվույտ» (<էշ-առվույտ) նշանակության առիթով նշենք, որ նախապես **էշ** ասելով հասկացել են ինչպես «էշ»-ը, այնպես էլ «ծի»-ն, ուստի մեր բառի հնդեվրոպական ազգակիցները մյուս լեզուներում «ծի» են նշանակում (հմմտ. նաև շումեր. ANŠE KUR.RA «էշ լեռան», «լեռնային էշ» > «ծի»)՝⁸⁵: Ըստ այսմ՝ հնագույն հայերենի *et-iop բառը նախապես նշանակել է «իշասայլ, ձիասայլ», իսկ Բրոնզի դարաշրջանում՝ նաև «մարտակառք»:

Այսպիսով, Զարմայր նահապետի առաջնորդությամբ Տրոյական (Եղիական/Իլիական) պատերազմին մասնակցած զորամասը, ըստ ամենայնի, բաղկացած է եղել ոչ թե «Եթովպացի»-ներից, այլ հայ կառավարներից և կառամարտիկներից՝ *et-iop-ներից, որոնք Ասուվայում (Տրոյան և Իլիոնը ներառյալ) խեթերի և հոմերոսյան տրոյացիների հետ միասին կռվել են հույն արքայացիների՝ Ախիլլասիների դեմ:

Սարգիս Գ. Պետրոսյան – Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, Հայկական լեռնաշխարհում դասերի առաջացման խնդիրները, հայ և հնդեվրոպական մյուս ժողովուրդների հնագույն պատմությանը, բանահյուսությանը, հատկապես առասպելաբանությանը վերաբերող հարցերը:

82 Տե՛ս **Մալխասյանց Ս.**, նշվ. աշխ., հ. I, Եր., 1944, էջ 549:

83 Նույն տեղում:

84 Տե՛ս **Աճատյան Հ.**, նշվ. աշխ., հ. IV, Եր., 1979, էջ 204, 206:

85 **Гамкредидзе Т.В., Иванов В.В.**, նշվ. աշխ., հ. II, էջ 544 ծան. 1, 560, 564, ծան. 1:

Summary

ABOUT THE ANCIENT CHARIOTS AND CHARIOTEERS OF THE ARMENIAN HIGHLAND

Sargis G. Petrosyan

Ancient vehicles of the Armenian Highland were massive four-wheel, with wheels without spokes. Hittite vehicles *tiiarit* = **diiaret* were also of such kind. This word has probably not “Hurrian” but Indo-European-Armenian origin. The first component of the word corresponds to an arm. *ti* “big” (<I.-E. **dei-* “shine”), and the second component – from ancient Arm. **aret* (**a-ret*<I.-E. **ret(h)* “slide, spins, rotate”: cmp. ancient Hindu *rntha* “vehicle, chariot”, Latin *rota* “wheel, circle” and so on. Chariots are known from the III millennium BC. by Sumerian images, but the center of the creation of wheeled vehicles were northern mountainous regions, with strong wood forests, where existed also metallurgy of bronze. These were the regions of the Armenian (Eastern) Taurus.

In the Hittite code of the laws of XIV century B.C. the tribes Manda and Sala were mentioned as the Hittite citizens, earlier exempt from duties. The representatives of these tribes are presented as fighters. The descendants of these tribes are the representatives of ancient Armenian naharar dynasty Mandakuni and Salkuni. Together they are also mentioned in the “History of Armenia” by Khorenatsi (II, 8), in ancient Armenian “Gahnamak” (47th and 48th) and “Zoranamak” (14 th and 15 th). So their possessions were in the neighborhood: nakharars (overlords) Mandakuni were the owners of gavar (province) Arshamunik, and Salkuni once lived in the south Arshamunik, in gavar (province) Taron. Hence, the ancestors of these nakharars (overlords) lived in the neighborhood in this area (in the north-west of Lake Van). Ethnonyms of the tribes manda and sala are of particular interest, because they etymologized from Indo-European-Armenian base. According to Khorenatsi, during the Trojan War Armenian commander Zarmayr together with the Ethiopian army went to the aid of the Trojans of Priam, though he was serving to the Assyrian king Tevtamos (I, 20; I, 32). In Greek sources of Khorenatsi originally it was not about the country of Assyria, but about the country Assuwa in the northwest of Asia Minor, as the name of Tevtamos is of Indo-European (Asia Minor, the Balkans) origin.

As for the “Ethiopian army” of Zarmayr, it is likely that there here too were originally mentioned the soldiers of Armenian origin. In our opinion, there was initially no ethnonym Ethiop, but the little-known archaic Armenian word **eti-iop* “horse-drawn carriage”> “chariot”.

О ДРЕВНИХ КОЛЕСНИЦАХ И КОЛЕСНИЧНЫХ АРМЯНСКОГО НАГОРЬЯ

Саргис Г. Петросян

Древние транспортные средства Армянского нагорья были крупными четырехколесными, с колесами без спиц. Хеттская грузовая телега называлась *tīarit*/**dīaret*. Это слово вероятно не “хурритского”, а индоевропейско-армянского происхождения. Первый компонент этого слова соответствует арм. *տի* “большой” (и.-е. **dei-*“сияние, сиять”), а второй компонент происходит от арх. арм. **տրևտւ* “колесо” (<**sh-rtun*<и.-е. **ret*<**ret(h)-*) “вращение, вращаться”: ср. др. инд. *rātha* “транспортное средство, “колесница”, латин. *gota* “колесо”, “круг” и др. Колесницы известны с III тыс. до н.э. по шумерским изображениям, однако центром создания колесных транспортных средств были северные горные районы, с лесами крепкой древесины, где существовала и металлургия бронзы. Такими были области Армянского (Восточного) Тавра.

В хеттском кодексе законов (XIV в. до н.э.) племена из Армянского нагорья *манда* и *сала* упомянуты как наемные воины ранее освобожденные от податей. Потомки этих племен являются представителями древнеармянских нахарарских родов *Мандакуни* и *Салкуни*. Они вместе упомянуты также в “Истории Армении” Мовсеса Хоренаци (II, 8), в древнеармянском “*Гахнамаке*” (47-е и 48-е места) и “*Зоранамаке*” (14-е и 15-е места). По соседству были также их владения: нахарары *Мандакуни* были обладателями гавара *Аршамуник*, а *Салкуни* когда-то жили южнее *Аршамуника* в гаваре *Тарон*. Значит, и предки этих нахарарских родов жили по соседству в этих местах (на северо-западе от озера Ван). Этнонимы племен *манда* и *сала* вызывают особый интерес, так как они этимологизируются на индоевропейско-армянской основе.

Согласно Мовсесу Хоренаци, во время Троянской войны на помощь троянцам *Приама* вместе с эфиопской армией пошел армянский полководец *Зармайр*, служащий у ассирийского царя *Тевтамоса* (I, 20; I, 32). В греческом источнике Хоренаци, скорее всего, первоначально речь шла не о стране *Ассирия*, а о стране *Ассува* на северо-западе Малой Азии, так как имя *Тевтамоса* индоевропейского (малоазийско-балканского) происхождения.

А что касается “эфиопской армии” *Зармайра*, то вероятно, что первоначально и здесь были упомянуты воины армянского происхождения. По нашему мнению, первоначально здесь был не этноним *Ethiop* “эфиоп”, а малоизвестное архаическое армянское слово **eti-iop* “конный экипаж”>”колесница”.